



## Հասարակաշխատական-Միմնաշխատական հիմնադրամի արվեստի գործերի ստեղծման դրամաշնորհային երկրորդ ծրագրի մասնակցության պայմաններ

Հասարակաշխատական-Միմնաշխատական հիմնադրամը հայտարարում է  
դրամաշնորհային ծրագրերի երկրորդ մրցույթը՝ վիզուալ արվեստի  
ուղորտում գործեր ստեղծելու համար։

Ծրագրի նպատակն է.

1. Աջակցել արվեստի նոր գործերի ստեղծմանը,
2. Խթանել արվեստագետների ստեղծագործական ներուժը,
3. Նպաստել Հայաստանի ժամանակակից արվեստի զարգացմանը։

### Թեման - Առերեսում

Մարդիկ չեն սիրում առերեսվել իրականության հետ, որովհետև այն  
հաճախ լինում է խնդրաշատ, անարդար, ցավոտ, անգամ հակասական։  
Առավել չեն սիրում առերեսվել սեփական ես- ի հետ։

Նիցշեն ասում է. «Ոչ մի արվեստագետ չի հանդուրժում  
իրականությունը»։ Իրականության անհանդուրժողականությունը  
արվեստագետին մղում է իրականությունից փախուստի և զուգահեռ  
իրականության ստեղծման, կամ՝ իրականության մանրակրկիտ վերլուծման  
ու ժամանակակից մարդու ամենասուր և խորքային հոգևոր, բարոյական ու  
սոցիալական խնդիրների հետ առերեսման։ Իսկ դուք պատրաստ եք  
առերեսվել իրականության հետ։

### Մասնակցության պայմանները՝

- Մրցույթին կարող են մասնակցել ժամանակակից վիզուալ արվեստի՝  
կերպարվեստի, քանդակի, լուսանկարչության, ինստալյացիայի,  
վիդեոարվեստի ուղորտներում տարբեր միջոցներով աշխատող  
արվեստագետները և արվեստային խմբերը։
- Մրցույթին կարող են մասնակցել միայն այն արվեստագետները,  
որոնք ՀՀ քաղաքացի են, իսկ արվեստային խմբերում՝ պարտադիր է  
անդամներից մեկի ՀՀ քաղաքացիությունը։



## Դրամաշնորհի չափն ու տրամադրման կարգը

- Առավելագույն չափը կազմում է 2,500,000 դրամ:
- Տրվում է միայն այն ծախսի համար, որն անհրաժեշտ է արվեստի գործը ստեղծելու համար:
- Մասնակցության համար անհրաժեշտ է լրացնել հիմնադրամի հայտադիմումի ձևը:
- Առաջնահերթություն կտրվի այն նախագծերին որոնք կհամապատասխանեն առաջարկվող թեմային և կնպաստեն արվեստագետի ստեղծագործական զարգացմանը:
- Համաֆինանսավորումը ողջունելի է:

## Դրամաշնորհի տրամադրման ժամկետը եւ վճարման կարգը

- Դրամաշնորհը տրվում է 6 ամսվա կտրվածքով (դիմորդ/ները սահմանում են նախագծի մեկնարկն ու ավարտը): Արվեստի գործի ստեղծումը պետք է ավարտվի նշված ժամկետում :
- ՄիՆասյան-Հասարակա հիմնադրամի տրամադրած դրամաշնորհով ստեղծված արվեստի գործը կամ նախագիծը ներկայացնելիս՝ արվեստագետները պետք է ներառեն հիմնադրամի անունը և լոգոն բոլոր հետագա հրատարակություններում, ցուցադրություններում կամ այլ միջոցառումներում:
- Ստեղծված արվեստի գործերը հանդիսանում են արվեստագետի սեփականությունը, սակայն վաճառելու դեպքում՝ պարտավոր է առաջին հերթին առաջարկել հիմնադրամին:
- Ֆինանսական օգնությունը տրամադրվում է երեք փուլով, տոկոսային հարաբերակցությունը կարգավորվում է պայմանագրով:

## Հայտադիմումների ժամանակացույցը

- Հայտադիմումները ներկայացնելու վերջնաժամկետն է հուլիսի 15, 2020թ.:
- Ընտրությունը և հաղթող հայտադիմումների հայտարարումը՝ օգոստոսի 30, 2020թ. :
- Լրացված հայտադիմումները (հայերեն), պետք է ուղարկել հիմնադրամի էլեկտրոնային հասցեին՝ [info@hmf.am](mailto:info@hmf.am):
- Հայտադիմումները պետք է համապատասխանեն մրցույթի չափանիշներին և թեմային:
- Մրցույթին դիմելիս կարելի է լրացնել միայն մեկ հայտադիմում: Հարցերի դեպքում գրել [info@hmf.am](mailto:info@hmf.am) էլփոստին կամ զանգահարել Մարինե Հարոյանին +37493581590